

# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

51<sup>ր</sup> ՏԱՐԻ, ԹԻԻ 3

(ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

19 ՅՈՒՆԻՈՒԱՐ 1902

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

|                                               |                   |
|-----------------------------------------------|-------------------|
| «ԱՄՕՐԹԻ»ՆԵՐԸ . . . . .                        | Օ. ՉԻՖԹԷ-ՍԱՐԱՅ    |
| ԽՈՒՈՎԱՆՔ (Նորավեպ) . . . . .                  | Շ. ՇԱԽԱՐՇ         |
| ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՍ . . . . .                    | Վ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ   |
| ԱՇԽԱՐՀԻ ՇՐՋԱՆԸ. Բեֆին . . . . .               | ՍԴԷԼԼԱ            |
| ՄԵՂԵԴԻՆ (Բանաստեղծութիւն) . . . . .           | Ա. Կ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ |
| ՄԱՀԱԴՈՅԺ. — ՏԻԿԻՆ ԵՂԻՍԱԲԵԹ ՕՐՄԱՆԵԱՆ . . . . . |                   |
| ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ (Բօնեկ) . . . . .                 | Թ. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ   |

Մասիս շաբաթաբերքի շարեկան բաժանորդագիւնն է Կ. Պոլսոյ համար ՔԱՌՍՈՒՆ  
դրօ. եւ գաւառներուն համար ՅԻՍՈՒՆ դրօ., կանխիկ վճարելի : Արտասահման՝ 12 Գրանգ  
կամ 5 բուլլի : Թղթասարական ծախքը խմբագրութեան իրայ է : Վեցամսեայ կամ ե-  
ռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն  
ամսոյ մէկէն : Մասիս հրատարակ կ'ելլէ ամէն շաբաթ առաւել, եւ կը գտնուի Բերայի բոլոր  
ծխավաճառներուն ու Պահիչ Գաբուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալա-  
թիայ, Պոլսոյ եւ բոլոր արուարձաններու լրագրավաճառներուն հոյ :

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՏԷ

در علیہ غلطہ «مسیس» غرضی ادارہ

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ»

Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորասունկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

# ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵՍ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալաթա-Սերայի Լիսեին դեմ

Ամեն օր ժամը 5—11 (Ը. Ե.)

Կիրակի օրերը ժամադրութեամբ

# ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 15

Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ՝ կը զարմանէ մասնաւորաբար, նոր մեթոտներով եւ խնամով ստանոխի, աղեաց, միզական ճամբաներու հիւանդութիւնները, ջղաշին սկառուքիւնները, զաղիական ախտերը (սիֆիլիս եւրի) եւ մորթի հիւանդութիւնները:

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը:

# ԱՐԻՍ ԵՒ ԸՆԿ

ՇՈԳԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ

# ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՃԱՌԻ

Հիմնեալ 1889 ին.



Վաճառիչ

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱԼԷ



Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ ատաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպայի վարպետի մը շփոթութեան ներքեւ կ'արտադրէ ամենանորը հոտեղէններ ինչպէս նաեւ թուալթի հոտաւէտ եւ լուացքի պարզ օճառներ:

Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանքաց դէմ մրցելու ատաւելութեան կը միացնէ գիններու գերազանց ամանութիւնը: Փափաքողներուն՝ քաթալօիը ձրի կը զրկուի:

Մեծաքանակ գնում րնել ուղտները կրնան դիմել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՕՍՏԻ ՊԱՔԵՒԻ Կ. ԻՆՃԻՃԻԵԱՆ ՈՐԴԻՖ վաճառատունները, իսկ քաւառներու եւ օտար երկիրներու մէջ գիմել գործակալութեանց որ ի ստորեւ, ուր պիտի գտնեն նմոյշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով:

ԲԱՐԻՋ.—ՊՊ. Լաքառիեռ Որդի եւ Ընկ. 28 Ռիշաթտէօն:

ՊՈՄՊԱՆ.—ՊՊ. Ապքար եւ Ընկ.

ԱՂԵՔԱՆՆԻՐԻԱ.—Պ. Մ. Գալփանեան

ԳԱՀԻՐԷ.—Պ. Հ. Ռոզաբարյ.

ՌՈՒՍՃՈՒԿ.—Պ. Գ. Կ. Ինճիճեան որդիք.

ՎԱՌՆԱ.—Պ. Կեռոն Արտիքի.

ԻՋՄԻՏ.—Պ. Յակոբ Մոմճեան

ՋՄԻՒՌՆԻԱ.—Պ. Հայրիքի Վառնիկ.

ՍԵԼԱՆԻԿ.—Պ. Տիւօ Ֆերնանտէզ.

ԻՍՎԻԻԳ.—Պ. Մ. Գալփանեան.

ՊԵՐՈՒԹ.—Պ. Ֆրանքել Շիֆֆեր.

ՍԱՄՍՈՆ.—Պ. Պ. Պետրոսեան եղբարք.

ՏՐԱՊԻՋՈՆ.—Պ. Արիս Կ. Ինճիճեան.

ՍԵՐԱՍՏԻԱ.—Պ. Պ. Վ. Ս. Մեծատուրեան

ՌՈՏՈՍԻՍ.—Պ. Յակոբ Բազալտալ

# ՄԱՍԻՆ

5174 ՏԱՐԻ

— 19 ՅՈՒՆԻՈՒՐ 1902 —

ԹԻՒ 3

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ ԳՐԱԿԱՆ ՄՐՑՈՒՄԻՆ ՎՐԱՅ

ՆԻ

## «Ս.ՄՕՐԹԻ»ՆԵՐԸ

Օրը օրին ծանուցուեցաւ որ մրցումին մասնակցելու նպատակով երեսուներկու հարազատներ հասած են Մասիսի խմբագրութեան միջոցով, քննիչներուն հասցէին :

Բնական է որ ոչ ոք պիտի ուզէ կարծաթաբան ըլլալ այնքան որ տարուի կարծելու թէ, այնչափին մէջ մինակ պարզելին արժանացուն էր ազէկ գրուած եւ միւսները բան մը չկին արժեք : Այդ տեսակ մտածութիւն մը դատապարտութիւնը պիտի ըլլար նոյն իսկ մրցումին ոգիին եւ անկէ սպասուած արդիւնքին : Մրցումը, ինչպէս առջի օրէն գրուեցաւ, զարկ մը տալու համար էր նորազէպի ճիւղին մշակումին, փոխանակ ուղիւն սինցի մը, որ տարակարգ չիկայ թէ գոնէ Մասիսի խմբագրութեան համար չէր կրնար գոյութեան իրաւունք մը ունենալ : Եւ այդ զարկը մէկ հոգիին մը պարզեւը տանել ու երթալովը չէր որ ձեռք պիտի բերուէր, այլ միւս յաջողածներուն ալ քաջալերուելովը եւ չի յաջողածներուն ալ՝ իրենց պակասութիւններուն ցոյց տրուելովը եւ, — առանց անունի, — հրապարակային քննադատութեան ենթարկուելովը :

Մասիսի մրցումը ես աւելի վիճակահանութեան մը պիտի ուզէի նմանցնել ուր ամենքն ալ քիչ շատ իրենց պարզելի բաժինը պիտի ունենան : Այսպէս, օրինակի համար, առաջին

հանդիսացողը մեծ պարգեւն է որ կը շահի յետոյ գովութեան եւ հրատարակուելու արժանացումները իրենց կարգով զանազան քրիստոնէական տիրացած կը սեպուին : Իսկ անոնք որոնք բաւական սպասուքներէ ետքը, իրենց տուած դրամը միայն եւ կ'առնեն . . . առանց տոկոսի, բնաւ չի յաջողած նորազէպիին եւ, անօրօքները, — երթալով որ Մասիսի խմբագրութիւնը բարեհաճութիւնը կ'ունենայ ձեռագիրները իրենց տէրերուն վերադարձնելու :

Ամենէն առաջ, յետակ ու դիւրմբունքի ըլլալու եւ յետագայ խորհրդածութիւններու ամուր կուտան մը ունենալու համար՝ թուանշաններով ու վիճակագրութիւններով պիտի ջանամ խօսիլ, նիւթին ու թիւին ներած սահմանափակ չըջանակին մէջ :

Երեսուներկու նորազէպիներուն մէկը պարզեւը շահած է. չորսը (որոնցմէ մէկը երեւցաւ արդէն) կրնան հրատարակուիլ : Իբր ազուր որ ու յաջող գրութիւններ սրանց պէս բաներ գրելու արդէն իսկ կարող տէրերը ամէն տուն, առաջին պարզեւներու յաջողապէս կրնան թեկնածու ըլլալ նորազէպի որ եւ է մրցումի մէջ : Վեց հատ քիչ շատ ազէկ (passable) գրուածքներ որոնց մէջ եթէ ազուր բաները չեն պակսիր, գոնէ մէկէ աւելի սայթաքումներ տեղի ունեցած են եւ յամառ

ընթերցումներու , յարաւեւ ինքնադարգա-  
բուսի եւ աշխատութեան շնորհիւ կրնան քիչ  
ատենէն ճշտորիչ եւ յուսով յատիլ տալագա-  
յին : Մնացած քսանը մէկ հատը , — արժո-  
քիները , — բաւին ամբողջական առումովը ,  
կորսուած , խեղճ ու կրակ , ու հիմակուհի-  
մա անյոյս վիճակի մէջ են :

Առաջինին վրայ , Մասիսի խմբագրութիւն-  
նը իր գնահատումը բերած է արդէն , եւ ինծի  
ուրիշ ըսելիք չի մնար՝ եթէ ոչ երկրորդել  
զայն եւ շեշտել տոհմային-գաւառական գրա-  
կանութեան այնչափ ծեծուած , շատերու  
համար գրեթէ անտեղի ու անյուծելի նկատ-  
ուած խնդիրին մասամբ պարզուելը , անոր  
աչքի զարնալ յաղթանակովը , բան մը որուն  
վրայ անգրադառնալու մէկէ աւելի անգամ-  
ներ պէտք պիտի ունենամ՝ նայն իսկ ներկայ  
նիւթիս մէջ :

Միւս յաջողածներուն համար ալ ըսելիք  
մը չունիմ իմ մասիս , քանի որ Մասիսի  
խմբագրութիւնը՝ քննիչներուն հետ համախոր-  
հուրդ , օգտակար ու անկողմնակալ դադա-  
փարը՝ ունեցաւ երկրորդն ալ հրատարակու-  
թեան տալու եւ հանրային կարծիքին ներ-  
կայացնելու , — եւ թերեւ նոյն բանը ընէ յա-  
ջողներուն համար ալ : Այս պարագային ,  
մրցումին քննիչները անկեղծօրէն ու ինքնա-  
բերաբար կենթարկուին աւելի քարձր գաւ-  
տաւանի մը , հանրային կարծիքին , զոր  
անշուշտ վարել պիտի բարեհաճին ձեռնհաս  
քննադատներ , բազմատուփեան գնելով գա-  
նունք առաջին հանդիսացողին հետ եւ իրենց  
գիտողութիւնները ներկայացնելով երբ եւ  
ուր որ ուղեն : Այս գաղափարին անկեղծու-  
թիւնը ու պատուականութիւնը դոնէ կը կար-  
ծեմ որ պիտի դօրեն խփել աշու բերանը այն  
չիկամեցողներուն օրոնք այս տեսակ մրցում-  
ները՝ ռէքլամի եւ հրատարակութիւնները՝  
ամառի սիւնակներ լեցնելու համար չինուած  
եսներ պիտի ուղէին կարծեցնել միամիտնե-  
րուն : Միևնայն տանն , քննիչներուն ալ ընդ-  
հանուր քննադատութեան ներկայանալու հա-  
մարձակ ինքնավստահութիւնը պէտք եղածէն  
աւելի զօրաւոր հերքում մը պիտի բլլայ , ա-  
մէն բան արտաքինէն ու իրենց կիրքէն դա-  
տնող նախանձաբեկներուն օրոնք ամենէն ա-

ռաջ անձնականութիւններով ուղեցին խաղալ  
մրցումին առիթով ու քննիչներուն նկատ-  
մամբ :

Բաժնեմէկ արժօքիներուն վրայ ընդ-  
հանուր կարծիք մը եւ զատ զատ գիտողու-  
թիւններ պիտի ներկայացնեմ հիմա հոս ,  
իրարու լոյրորովին անկապ կերպով , եւ ա-  
նոնց ամբողջութենէն է որ դատ մը պիտի  
եղլայ չհաս նորավիպագիրներուն , եթէ իրաւ  
է որ , դատ մը պիտի ելլար մրցումի գաղա-  
փարին , առաջ բերած իրաւացի իրարանցու-  
մին եւ եղած զոհողութեան մէջէն :

Էն առաջ գիտելու պարագան ան է որ  
արժօքիներէն ոչ մէկը յարգած է մրցումին  
այն պայմանը որուն նայելով առ առաւելն  
Մասիսի էջերուն հաւասար վեց թուղթներուն  
մէկ կողմին վրայ գրուած պէտք էր ըլլար  
նորամուտը : Այս պայմանը որչափ որ սահմա-  
նափակում մը ըլլար գրական կարողութիւն-  
ներու առատ ցայաքի մը , իր իրաւունքն էր  
վերջապէս , նկատելով որ միաքի ընդհանուր  
ցուցահանդէս մը ըլլալու սահմանուած չէր  
ան եւ եւրոպական մրցումներու պէս տողի  
հաշիւի չափ խտութիւնով չէր որ կը ճշգուէին  
սահմանները անոր :

Ճշգրտահաշութիւնը իրաւ է որ , աչքի զար-  
նալ յարաբերութիւն մը չունի գրական կարող-  
ութիւններու մշակումին հետ , եւ պիտի  
չի կրնար աղղել վերջնական յաջողութեան  
ու քննիչներուն կարծիքին վրայ , բայց տա արժո-  
քիներուն ամենուն ալ հեղինակներուն գեւ-  
չի կազմուած նկարագրի մը տէր ըլլալին կա-  
պացուցանէ : Ատկէ զատ , տրուած պայմանները  
բանի մը տեղ չի գնելու ընդարձակ ունակու-  
թիւն մը կը յատկանշէ ապիկա մնալ մէջ , քիչ  
մը ամէն տեղ , որ մասնատանց գրելու բուսն  
մարմաջին առջեւ անտեղիտալի ու յորդ  
պոռթկումի մը երևույթը կառնէ : Այս առի-  
թով միայն հաւաքաբարական պիտի ըլլար  
հարկու ճշդիլ սա կէտը որ , գրուած նորա-  
վէպները քանի խեղճ , քանի տղայական եղած  
են՝ այնչափ աւելի երկարապատում ու ճօշկուն  
եղած են , մինչդեռ քանի յաջողութեան ու  
ազնորութեան մօտեցած են՝ այնքան մօտե-  
ցած են նաեւ տրուած պայմանին :

Բանի որ խօսքը մրցումին մէկ պայմանին

եւ այդ պայմանը բռնելու ճշդապահութեան վրայ է, չեմ ուզեր ասիլ լը փախչել անդուշակի պատմելու համար չափ ingenieux ու չափ զուարճարի գիւտ մը զոր նորավիպագիրներէն մէկը ըրած է եւ որ սակայն չէ զօրած զինքը ամօրթիներուն ցանկապատէն դուրս նետելու, ընդհակառակը : Ատիկա որ ամենէն երկարներէն մէկն է եւ պայմանէն գրեթէ չորս անգամ աւելի, քսանը չորս մեծագիր երեսներ մտածած է, ամենէն աւափակ պատմութիւնը հիւսելով, երկուող մը զրած է մէջը վսեմախօս ! քննիչներուն քաջակորով !! ուղղապատմեանը յանձնարարուած, որ կը սկսի ստուգես :

«Գիտնալով հանգիստ որ օրինական պայմանը վեց էջ է, կը ստիպուիմ չեղիլ այդ պայմանէն, նորավէպիս գրական բաժին ! մըն ալ ապահովելու համար : Բայց եթէ չի հաւանիք այդ չեղումիս, հաճեցէք, թերթերուն մէջ անշատ կերպով գրուած այն ինչ նշանով թուղթը առնել եւ գնել 18րդ էջին վրայ եւ անկէ սկսիլ կարդալ որ ինքնին դատ նորավէպի մը նիւթը պիտի կրնայ կազմել եւ վեց էջ միայն պիտի տեսէ : . . »

Նորավէպ մը՝ որ իր կէս մէջքէն անդին նորավէպ մըն ալ կը ծնի . . . գէթ ասոր չէինք սպասել, կատարեալ tableau մը ! :

Բնանը մէկ ամօրթիներէն երկուքը անմիջապէս կը նետուի մէկգի, առանց իսկ բառ մը դուրսելու անոնց վրայ, իրր վերջին աստիճան թշուառ ու լիկած բաներ՝ որոնց համար չարժեք ժամաւաճառ ըլլալ ու ընել ընթերցողներն ալ : Առանց մէկը Պօլիսէն է, միւսը գաւառէն : Այս distinctionը կարեւոր է միշտ ինծի համար, ճշգիւտ համար գերերը այդ երկուքին, յաջողութեան ալ մէջ, անյաջողութեան ալ մէջ, Այդ երկուքը անգարմանի կերպով կորսուած ու ցաւաւար գրութիւններ են, անհամարու էջերու մէջ խիստ քէն թմուած ու անմարտելի, եւ որ եւ է բարեւոյթով անյոյս ու անտրամադիր : Երեսուն երկու նորավէպի մէջ, այլանդակութեան ներկայացուցիչ այսքան չնչին փոքրամասնութիւն մը, որ ասիական է եւ յուսալից, Ասով միւս տառերինը չեն դարձիր, սակայն, մարդու երես չեղալիք բաներ ըլլալէ, բայց

չենք կրնար ենթադրել ու պահանջել անշուշտ որ ամէն գրող, բացայայտ ու կոնստանտ տաղանդ մը ըլլայ անպատճառ : Ամենքն ալ պիտի ունենան իրենց նախնական անյաջող փորձերը, սալթաքումները, չեղումները, բայց վերսկսելու յամառութիւնը, բարեշրջուելու ու կատարելագործուելու բուռն փափաքը ու անվնաս աշխատութեան մը հետապնդումը պիտի դան վերջապէս, զիրենք ալ դնելու յաջողութեան ճամբուն մէջ, որ բաղդը դործ չունի բնաւ, ինչպէս որ եւ է վիճակահանութեան մը մէջ :

Չեմ կարծեր որ շատ ներողամիտ դատաստան մը ըրած սեպուիմ, կարծելով որ շատ քաջակերական եղած է արդիւնքը մերցումին, նկատելով որ երեսուներկուքի վրայ ութը-տասը յաջողածներ արտադրելէ ետքը մնացած տասներինն ալ, անդարմանելի վիճակ մը չէ որ ցոյց կուտան, ընդհակառակը : Ամենքն ալ սկսնակներ են, դեռ կեանքը չապրած, կամ երեւակայութիւնով ու գիրքերու մէջ միայն ապրած աղաքներ են, առանց նկարագրի ու առանց իսկութեան, զպրոցին սեմէն հազիւ ստեղծելի դուրս դրած : Եւ այդ է միայն իրենց յանցանքը : Դեռ ատեն ունին աշխատելու, կազմակերպուելու, կատարելագործուելու եւ այն ատեն ո՞վ կրնայ պնդել թէ, յառաջիկայ մրցումի մը մէջ, ատոնցմէ մէկը չէ որ պիտի առաջին հանդիսանայ : Աս խօսքերս կը յուսամ որ քաջակերտքի գրողի մը կըլլան բոլոր սկսնակ այդ պարտններուն, արդիւտ, կեանքը ուսումնասիրելու, շատ ու շատ աշխատելու եւ անկէ ետքը գրել ելլալու համար, ու այն ատեն թո՛ղ ապահով ըլլան որ պիտի յաջողին : Այսչափ մեղմ եւ յուսադրող խորհրդածութիւններէ ետքը, կը սիրեմ կարծել որ, ամօրթիները քիթ բերան պիտի չուզեն ընել, նոյն իսկ իրենց օգուտին համար, եթէ մէկ քանի թերութիւններ, որոնց մէջ խոչորները չեն որ քիչ տեղ կը բռնեն, քիչ մը խիստօրէն քննադատուելու ելլամ :

Նախ : Բնան նորավէպի վրայ տառերկու հատին մէջ տառասխալները եւ աճելի տեւսակէն կը վրտան փունջ փունջ : Ասիկա վերջին ծայր տմօթ բան մըն է : Ուղղաք-

րութեան դէմ գիտենք որ ամէն տեղ արաունջ  
ու պայքար կայ : գիտենք որ շատ անգամ  
անիմաստ կաշկանդներու կը հպատակի ան եւ  
անելորդ դժուարութիւններու կառաջնորդէ ,  
բայց մէկը որ քիչ շատ բան մը յղանալու ու  
գրեթէ կարողութիւնը ունի՝ առանց գիտնալու  
թէ քողոց , քչել , փափախում չի գրուիր ,  
իրաւ արգահատելի բան է : Ուրիշ բան է  
սկզբունքով որոշ ու տարակոծուն ուղղադ-  
րութեան մը հետեւիլ , ուրիշ բան է գրելու  
այդքան տարակաւն մէկ պէտքին մէջ այդ  
աստիճան տգէտ ըլլալ ու հրապարակ ինչալ :  
Մեր աւօրքիները , եթէ նոյն իսկ գեղեցիկ  
բան մը յաջողին գրել , լեցուն այդչափ տա-  
ռասխախներով , պիտի նմանէին մէկու մը որ  
երկեղծի մը մէջ , շատ գեղեցիկ coupeով  
հազուադէպ մը հաղած է՝ որոնց վրայ  
վերէն ի վար իւզի , մոմի ու աղաի բիծեր  
կան կամ կթած :

Նորավէպներէն մէկ երկուքին տակ՝ հա-  
կաւակ պայմանի կը տեսնեմ որ իսկական  
անուն գրուած է : Անուններ՝ զորս կը յիշեմ  
կարգացած ըլլալ երբեմն ցանցաւորէն , օրա-  
թիւրթիւրու անկիւնները , տափակ գրութիւն-  
ներու տակ : Առանց մէջ ալ լեցուն տառա-  
սխալ : Ըսել է առանց սա ու նա կերպով  
հրատարակել տուածներուն տառասխախները ,  
դպրոցական աղու շարագրութեան պէս , խմ-  
բագրութենէն են անցած : Այն աքեն կտրելի  
չէ չի խզճալ վիճակին վրայ այն տարաբաղդ  
խմբագրներուն՝ որոնք իրենց lacuneները լե-  
ցնելու համար այդ կարգի գրութիւններ հիւ-  
րընկալելու չափ կը ցածնան եւ տառասխալ-  
ներ արագորակով կ'անցընեն իրենց բաղձար-  
դիւն ու հանրօգուտ ժամերը :

Երեւակայեցէ՛ք մրցումին խառնուելու  
յանդգնող եւ թերեւս առաջին ելլալու երա-  
զովը արտօնող , գրելախաէ բռնուած տղաք-  
ներ որոնք Վօլթերէն յիշատակութիւններ կը  
բերեն առանց չիտակ գրելու այդ անունը իսկ .  
Woltair !!! , որոնք՝ է՛նած օրաի տառաբաղդ  
սէրերը կը նկարեն , առանց հերոսները մո-  
լեխութիւններով կը փորփոքին , որոնք հա-  
ւիտանական յեգնութիւններ կը տեսնեն կեան-  
քի անխուսափելի ընդացքին մէջ : Օ՛հ , իրաւ  
որ սոսկալի է ստիկա եւ վերջին ծայր ամօթ ,  
կը կրկնեմ :

Յաջողածներուն կէսը Պոլիսէն է , կէսը  
գաւառէն : Աւօրքիներուն ութը՝ գաւառէն եւ  
առանք մէկը՝ Պոլիսէն , որով գրական պայտա-  
թեան մէջ երեք ձայնի առաւելութիւն մը ու-  
նին Պոլսեցի գրողները , ինչ որ աղէկ նշանակ մը  
պիտի չըլլար ապագային համար , նոյն իսկ եթէ  
յաջողութեան մէջ ջախջախիչ առաւելութիւնը  
գաւառացիի մը մնացած չըլլար , եւ ա՛յդ ,  
Պոլսեցի քննիչներուն կարծիքովը , Ստիկա  
շատ կարեւոր պարագայ մըն է զոր կ'արձա-  
նագրեմ հաճոյքով , միեւնոյն ատեն շնորհա-  
ւորելով գաւառացի եղբայրներս՝ գրական  
կամ ոչ :

#### Օ. ԶԻՅԹԷ — ՍՍ.ԲԱՅ

(Մնացածը յաջորդ թիւով)

Ծ. Խ. — Կը ցախէր որ չպիտի կրնանք գոհացու  
տալ մեր աշխատակից Օ. Զիքմէ-Սարաֆին այս յօդուածով  
արտայայտած փափագին , որ բերանացի ու գրաւոր կե-  
պով արտայայտուեցաւ նաեւ Մասխաի ընկերացողներէն  
ոմանց կողմէ , — այն է՝ հրատարակել Գրական Մրցումին  
ենթարկուած ու լաւագոյն նկատուած չորս-հինգ նորա-  
վէպներն ալ եւ այս , երկու պատճառներով : Նոյն , անոր  
համար որ Թերեւս գրողներն իրենք համարած չի գտնուին  
այս տեսակ հրատարակուած մը : Եւ յետոյ , կարծե-  
ցնել չի տալու համար , Թէ այս մրցումը հատառեւելու  
նպատակն էր Նորավէպներու շարք մը ունենալ , յաջորդա-  
բար զետեղելու համար , ինչպէս պարտին մէկը ելաւ  
գրեց օրաթերթի մը մէջ , մեր Յայտարարութեան երեւա-  
լուն յոջորդ շարժուն : Նոյն իսկ մրցանակ չի շահող , բայց  
առաջինին հաւասար նկատուող նորավէպին հրատարա-  
կումը հակառակ էր այս կարգի մրցումներու մէջ ընդուն-  
ուած կանոններուն . բայց , երեք քննիչներուն խորհուր-  
դովը , բացառուելուն մը ըլլինք՝ գրասիրական տեսակէտով  
Կը յայտարարենք որեւմն Թէ Վառան Յարուսթիւնեանի  
եւ Յովհաննէս Սեփեանի նորավէպներէն ետքը՝ մնացեալ  
ԵՐՍՈՒՆ ՆՈՐԱՎԷՊՆԵՐԷՆ Ո՛Ւ ՄԷԿԸ չպիտի հրատա-  
րակենք Մասխաի մէջ :

#### ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԸՆՏԱՆԵՍԻԱՆ ՊԵՂԱՆԵՐՆԵՐ, Թարգմ.  
Կ. Ս. Ինթիլիճեան , — Սոյն հետաքրքրաշարժ վիպաս-  
նութիւնը , որ անցեալ տարի Սուրեանդակ օրաթերթին  
մէջ հրատարակուեցաւ իրեն թերթին , եւ մեծ հաճոյքով  
կարդացուեցաւ , այս անգամ լոյս տեսած է երեք հատորով  
Վաճառման կեդրոնատեղին է Պաշտօնատեղան Գրատունը  
Պոլիս , Սուլթան համալ , Թիւ 14 : Կը գտնուի նաեւ միւս  
գրավաճառներուն քով : Գին 3 հատորի 15 դրուշ :

# Խ Ռ Ո Վ Ա Ն Ք

(ՆՈՐԱՎԷՊ)

... even hate is but a mask of love's  
I sicken on a dead gulf streaked with  
light  
From its own putrefying depths alone.  
(Robert Browning. —  
«Paracelsus»).

«Երէկ առաւօտ Ուինսթրոմիլի լճափին վը-  
րայ գտնուող երկու դիակները ճանչցուե-  
ր «Ն» Ս. . . ի պանդոկին տիրոջը ու սպասուոր-  
ներուն կողմէ. Էամմու Քրոզի եւ իր կնոջը  
«մարմիններն էին առանք, երիտասարդ զոյգ  
«մը որ քանի մը տարիներէ ի վեր սովորու-  
թիւն ըրած էր իրեն այդ պանդոկը իջեալ.  
«Նիլ ամառուան մէկ քանի ամիսները. Այս  
«տարի հազիւ երկու շաբաթ է ի վեր հասած  
«էին հոն, եւ առջի գիշերը լուսնի լոյսով  
«մակոյկով պառայի ելած էին. Թէ ի՞նչ է  
«պատահած եւ թէ ինչպէ՛ս իրենց մակոյկը  
«չըջած ու իրենք ալ այդպէս գիրկընդխառն  
«ու կարծես սիրոյ վերջին համայրի մը մէջ  
«իրենց մահը գտած էին. սառուղի կարելի  
«չէ եղած դեռ. Տիկ. Քրոզ անգլիացի ըլլա-  
«լով՝ ծնողքը հեռագրաւ կանչուած են, իսկ  
«ամուսինը օտարական սերունդէ ըլլալուն՝  
«Անգլիոյ մէջ ազգական չունի».

Անակնկալ աղէտները անհաւատալի կը  
թուին նախ, ու երեկոյեան թերթիս մէկ  
անկիւնը պզտիկ տառերով տպուած այդ  
հատուածը կրկին ու կրկին կարդալու ստիպ-  
ուեցայ անոր իրականութեանը համոզուելու  
համար. . . եւ անհուն, գորովազին ու ան-  
զուսպ ցաւ մը տիրեց հոգեւոյս. Ես միայն  
կրնայի հասկնալ այս վախճանը որ լուռ,  
պրկող, քանդող հոգեկան տառալի մը վերջին  
արարուածն էր. ես միայն կրնայի զիսնայ  
թէ այս ընտկան կարծուած ու հուսկուած  
արկածը ոճիր մըն էր, ու այսպանելու, պա-  
խարակելու, դատապարտելու քաջութիւնը  
չէի զգար իմ մէջս, այլ սիրազեղ ներողա-

մտութիւն մը, անսահման կարեկցութիւն  
մը, որովհետեւ իմ խեղճ, ազնիւ բարեկամիս  
կեանքը տառապանք մը եղաւ:

Տարիէն աւելի է որ տեսայ զինքը վերջին  
տեղում ու իր բերնէն իսկ լսեցի, իր պատ-  
մութիւնը, իր հոգեկան ցաւի ու սիրոյ զըր-  
կանքի զժնշակ պատմութիւնը զոր ինձ ըրաւ  
մերթ կարուկ, խորթ, նետի մը պէս խոցող  
բառերով ու հռնգիւններով, մերթ երկայն,  
մանուածապատ, հեշտանքի գիշերուան մը  
մեղկութիւնը ունեցող կամ ուրուականներով  
յաճախուած հին գլեակի մը աղջտղջային  
տրհաւիրքը պտտկերացնող խօսքի դար-  
ձուածքներով. հագիի մը մերկացումն էր ան,  
ինքնամբաստանութիւն մը, խոստովանանք  
մը. ու այս ամէնքը հրապոյրի մոգական  
դրախտի մը, բնութեան ամէնէն հրաշագեղ  
անկիւններէն մէկին մէջ:

Երկանիւծով երկար ուղեւորութեան մը  
միջոցին՝ խօնդավառ հիացումէս մղուած՝  
ճամբէս չեղած էի Ս. . . պանդոկին հողերուն  
մէջ մտորելու համար. Ուինսթրոմիլի լճին  
ափերուն վրայ մեկուսացած՝ անտառներու  
խիտ ու թառուալ շրջանակով մը պարեգո-  
տած, որ եւ է բնակութենէ մղոններով  
հեռու չքնաղ գիրք մըն էր անորը. Գեղեց-  
կութեան տեսիլք մը, վեհաշուք ու հսկայ  
փթթում մը, մանաւանդ զոյնի ներդաշնա-  
կութիւն մը, դիւթող, փայլալոյզ ու անա-  
կնկալ պէսպիսութեան մը ներդաշնակու-  
թիւնը. արեւով ու կանախով վէտվէտած  
ջուրին եզերքն ի վեր տարածուող թեղօշնե-  
րու, կնձիններու, շագանակներիններու հոծ ու  
մուրթ զանգուածներու մէջտեղ մրաւալարե-  
րու լուցավառ ու արիւնդոտ փունջերը, ու  
կուսաթաթիլներու նրբահուշ եւ նրբերանգ  
սրսկում մը. թարմ ու գալար խոտին թա-  
գորգին վրայ «արապէսք»ները ոսկի քրքում-  
ներու, սպիտակ մարդարտածաղիկներու,

հրապառ իր կապանքներու, երկններուն ու զգլխի  
նարկանքներու ու յակինթոսներու: Տեսակ մը  
սրբապաշտութիւն թուեցաւ ինծի ինքնամոռու-  
թիւնը հոտ օտարի մը, որ զէպի լիճը կը  
քայլէր արագ: Բայց զգացած որոնեղութիւնս  
զարմանքի փոխուեցաւ երբ կարծեցի ճանչ-  
նալ Վահրամը: ու մինչ կը վարանէի ես՝ ա-  
նոր նոյնութեանը անվստահ՝ արդէն իսկ նըշ-  
մարած էր ան ինծի ու կը մօտենար ար-  
տօրանօք:

— Ահ, զո՛ւն ես, զո՛ւն, հո՞ս... օ՛հ,  
ուրախ եմ, ուրախ եմ, ուրախ եմ, ըսաւ  
ձեռքերս սեղմելով ու ժպիւն: Բառերու կրկ-  
նութեան մէջ տարօրինակ հաճոյք մը կըզ-  
գար, կարծես կը սխրէր իր ուրախութիւնը  
հաստատելու, ինքզինքին անոր ճշմարտու-  
թիւնը հաւատացնելու:

«Ես ալ թիավարելու կերթայի, տեղացւոյ,  
կուգաս միասեղ»:

— Սիրով, միայն թէ վայրկեաններս սուղ  
են, ու շատ ալ յոգնած եմ: Ղեկը կը գոր-  
ծածնի՞ ըսի, ու հետաքրքրութիւնս հար-  
ցուց անոր:

«Ո՛ւր էիր, ե՞րբ եկար, ի՞նչ եղար, ի՞նչ  
կ'ընես կոր»:

Ժպտեցաւ տխուր ու տարտամ ժպտով  
մը, անանց պատասխանելու: ու մինչ ես  
երկանիւս կը զետեղէի թուփի մը քով, անի-  
կա մակոյկին չուսնը քակեց, թիւրը տեղա-  
ւորեց, զեկը անցուց ու մտանք մէջը:

«Avanti!» կատակեց, ու թիւ համաշարի  
հարուածներով ճեղքեցինք ջուրին մետաքսէ  
անդորրութիւնը:

Վայրկեան մը տառամտութեմէ վերջ, խօսիլ  
փորձեց:

— Լսեցի հարցումներդ, պիտի ուզէի պա-  
տասխանել անոնց, բայց ինքզինքս այդ ճի-  
զին կարող չեմ զգար զեռ: սպասէ՛ վայրկեան  
մը, ձգէ որ քեզ վայելեմ, խօսիլդ լսեմ, քեզի  
վարժուիմ: այնքան ժամանակ կայ որ զի-  
րար չենք տեսած, այնչա՛փ ժամանակ...:

— Ու չեղանք մէջ դարերու հեռաւորութիւնը  
կը դնէր:

Ծառերու կանանչ ստուերներուն տակէն  
եղերքները քերելով կը սահէինք: նեղուած  
լռութիւն մը կը տիրէր, բարձերու վրայ ըն-

կողմանած՝ հին տանները կ'երազէի: կը յի-  
շէի Վահրամը երբ պատանի մըն էր, մեկա-  
մազձոտ ու սիրտանջ տղայ մը, ամէն գե-  
ղեցիկ բանի թրթռացող հագիով մը, բանաս-  
տեղծութիւնը ու երաժշտութիւնը պաշտող,  
աղուոր պատկերի մը առջեւ փղձկող, ու մա-  
նաւանդ խանդոտ, զիւրահաղորդ բնաւորու-  
թիւնով մը: Մտերիմներ եղած էինք զպրօցին  
մէջ, ու իրարու փարած էինք պատանեկան  
բարեկամութեամբ մը որ սիրոյ սերմը ունի  
իր մէջ: քանի քանի ամառ գիշերներ, մեր  
զպրօցին պարտէզին մէջ, դասերու յոգնու-  
թեան վերջ, ման եկած էինք թեւ թեւի,  
մտիլն ներդաժմտութեանն օգտուելով, մեր  
զգայուն սրտերը իրարու բանալու, մեր անն-  
չանքները ու ըզձանքները, մեր վաղահաս  
յուսակարութիւնները ու վաղանցիկ դատու-  
թիւնները հաղորդելու, եւ մշատեւ ու ան-  
քակտելի եղբայրութիւն մը ուխտելու: Օր  
մը Լոնտրա դնաց ան ու մեր թղթակցու-  
թիւնը հազիւ քանի մը ամիս տեւեց: Տարի-  
ներով իրմէ առանց լուրի մնացի: լսեցի՞ մի-  
այն թէ Մեղլուհի մը սիրահարուեք՝ ու ա-  
մուսնացիր էր անոր հետ: Եւ ահա հիմայ ա-  
ռաջին անգամ՝ զիմացս կեղւէր, այլափոխ-  
ուած, աւելի՛ խորունկ, մոլորուն ու տենդի  
կրակով վառող աչքերով, շրթունքի ու յոն-  
քի դառն պատումներով, թախիծի՛ լուռ  
թիւններով:

Յանկարծ անոր ձայնի թրթռումները ուշ  
զրաւեցին:

«Բնաւ չըլլայ որ սիրով կարգուիս, ըսաւ  
շտապով, բնա՛ւ, բնա՛ւ»:

— Կինդ ո՛ւր է, հարցուցի:

«Մի՛ ընդմիջեր, այլ մտիկ ըրէ՛: Կուգե՛  
կոր խօսիլ, սրտիս լեզին դուրս թափել» ապա  
թէ՛ ոչ պիտի պոթիլայ ան կամ զիս պիտի  
խեղդէ: Ո՛վ գիտէ, զիս մտոցած էիր ալ: ա-  
մուսնանալս լսելուդ պէս «կեանքին նպատա-  
կին հասաւ»ի, «Երջանկութեան ծոցը հանդ-  
չեցաւ»ի գաղափարը ունեցար, ինչպէս սովոր  
ենք ընել ամէնքս ալ: տառն ու վէպը ա-  
մուսնութիւնով կը վերջանայ, մինչ չեմ գի-  
տեր ո՛ր բանաստեղծին բոսորին պէս՝ անիկ  
վերջն է որ տառն ու վէպը կը սկսին: Մեզ  
սխալ կրթութիւն տուեր են, մեր հոգիները

զղայնոտութեամբ անուշեր են, զանոնք յաւիտեանական չարչարանքի ու խռովքի զատապարտներ են. ի՞նչ կը ցանկամ անասնական, անգործ ու աներազ կեանքի մը ուր սիրտը, հոգին, վերջապէս այն անորոշ հոտանքը որ մեր մէջ խօշ ըզձանքներ, տարտամ մեղա մտղծութիւններ, անյագելի ծարաւներ կը պտուտէ, գոյութիւն չունենայ. . . .

«Երբ Սօֆիին առաջին անգամ տեսայ, իր աչքերն էր որ սիրեցի նախ. մտ թ, խաւարչաին, խորհրդաւոր աչքերը, ուր բան մը կուլար. տխուր աչքեր էին անոնք, ախուր՝ ինչ պէս ամէն աղետոր բան. երաժշտութիւն մը դոգդո՞ւ՞ աշխատի հոգիս կը գիծէին. ու խորունկ էին անոնք, խորունկ, խորունկ, խելքի պոյցա տալու չափ խորունկ, անէացման հրաւիրելու չափ խորունկ. ու այդ աչքերուն աղջամղջային ցոլքը անոնց գերին ըրաւ զիս. ինչե՞ր չէին խոտտանար անոնք. ի՞նչ թըրթըռացող, եթերային, երկնային էակ մը պէտք էր ըլլալ ան ուրուն հոգւոյն հորիզոնը այդ աչքերուն մէջ կը ճառագայթէր. ու զիմեցի իրեն պաղատանքով ու խոնարհութեամբ, խնդրեցի իրմէ որ իր այդ աչքերուն մէջ գնէր մասնաւոր իմաստ մը ինձ համար, համակրանք մը, գորով մը. Երբ սէրս պարզեցի իրեն, անիկա խնդաց ու մտածելու ժամանակ խնդրեց. քանի մը օր վերջ իր նշանածն էի. Ամուսնանալու համար հօրս արտօնութիւնը խնդրեցի. բայց ան բացարձակապէս մերժեց. — «Ի՞նչ կը գրէր, իմ աղաւս ելլէ սանկ անդ լիացի աղջիկ մը առնէ. աղջիկ մը որ պտնդակի մէջ զինի ու օդի կը ծախէ կամ առնելը սպասաւորութիւն կ'ընէ. ասո՞ր համար է որ աշխատեցայ տատեցայ, աղուս համար ստակ շինեցի. չէ՛, դուն անոր հետ չպիտի կարգուիս»:

Դառն խնդուք մը ունեցաւ ու լռեց պահ մը:

«Սօֆիին հետ ամուսնացայ. իմ երկնային սիրոյս առջեւ հայր, մայր, ի՞նչ նշանակութիւն ունէին. եւ սակայն այս ըմբոստութեան լուրը հօրս մահացու հարուածը եղաւ. գրեցին ինծի թէ նամակիս ընթերցումէն վերջ բառ մը չէ արտասանելու, անէ՞ծք մը չէ թըռուցելու բերնէն, այլ հետեւեալ առտուն օր»:

հասական դուր են զայն իր անկողնին մէջ եւ վերջին շունչովը անուն մը միայն մղմնջեր է, իմա, իմ անունս, իմ անիծեալ անունս. Նախապաշարում ըսէ՛ դուն, ես վատն եմ որ անուններ կան որոնք ցաւ ու աւեր կը տանին իրենց հետ. իմա անոնցմէ է. հայրս այնքան կը պաշտէ այդ անունը որ երեք սաները անով մկրտեց. մին հաղիւ տասներկու ամիս ապրեցաւ. սանտուկին ձեռքէն իյնալով սանդուխին ստորոտը, գլուխը ջախջախեց. երկրորդը տասներեօթը տարեկան հասակին մէջ թոքախտի զոհ դնաց. երրորդը, կը ճանչնաս դուն անիկա, հրդեհի մը մէջ իր աչքերը կորսնցուց. Ես. . . կը վախնամ, կը դգամ սր ոճիրի մը մէջ պիտի թքնեմ իմ հոգիս. . . . »

Այս վերջին բառերը հազիւ լսելի փափրսուք մըն էին. աչքերուն մէջ ակնարկը անշարժացեր էր կարծես հեռաւոր, գերբնական տեսիլքի մը յառած: Խեղճ Վահրամիս համար դողացի. ուղեցի փոխել զաղափայտներու շարքը:

— Վահրամ, ըսի, ցրուէ՛ այդ տխուր մը տածումներդ ու երջանկութիւնդ պատմէ՛ ինծի:

Վահրամ սթափեցաւ իր երազանքէն. «Երջանկութիւնս», միմաջ — ու տեսաւ մը ընտելութեամբ — «Սիրով մի՛ ամուսնանար, կը հասկնա՞ս, ընա՛ւ, ընա՛ւ, եթէ յուսախաբութիւն չես փնտռել, եթէ պատրանքներդ կը սիրես, վախցիր սիրոյդ ամուսնական վախճան մը տալէ: Հոն ուր երազ կը սպասէիր՝ կօշտ իրականութիւնը պիտի ակնհաս հոն ուր մոռացում կը փնտռէիր՝ մղձաւանջներու էն անարկուովը պիտի տանջուիս. եւ հոն ուր զգացում կ'ակնկալէիր՝ թափուր մը, քահմեկող, զոդացնող, սպաննող թափուր մը պիտի գտնես:

«Խօշ, բուն, կատաղի սէր մը եղաւ իմա, գորովանքի ու վայրագութեան խառնուրդ մը, եւ ուղեցի որ կինս սիրէ զիս կիրքով, ցաւով, անհունօրէն. իրմէ՛ իր աչքերուն խոտտումները ուղեցի կորզել, անոնց ծածկած դաղանիքին մէջ խորատուզիլ, անոնց գինովութեամբը արբեցալ. . . ու կինս չհասկցաւ ինծի — կ'ինքը չպիտի հասկնան մեզի, երբեք, երբեք, Երբ իրեն առջեւ ու»:

զեցի նոր, անսահման, տկնախաղ հորիզոններ բանալ, անիկա չլսացաւ անոնցմով, այլ կոյր մնաց անոնց ողորդող լոյսին. տեսակ մը արհամարհանքով նայեցաւ վրաս, ու երբ տառապանքի վեհ պաշտամունքը ուղեցի հասկցնել իրեն, ոտսկումով հեռացաւ ինէ. անիկա չհասկցաւ ոչ մին ալն աղուոր բաներէն որ իմ աչքս կը կազմեն. ու զայրոյթը ցնցեց անդամներս. չար ու անգութ բլլալ ուղեցի եւ անարդար եղայ. կոշտութեամբ խօսեցայ իրեն, հայհոյեցի, սպառնացի. «ախմար օտարական» կը մրմռար յաճախ, եւ կը զգայի թէ կ'առէր զիս ա'լ:

Կատաղութեան արցունքի քանի մը կաթիլներ ցայտեցին Վահրամի աչքերէն, ու անիկա չփորձեց կեցնել զանոնք. եւ տեսակ մը հեշտանքով վերսկսաւ իր խոստովանանքը.

«Պատահած է քեզի որ յանկարծ, առանց պատճառի, միտքդ ինչայ անցեալին մէջ՝ անգիտակիցօրէն ու ակամայ՝ բրած մէկ վիրաւորիչ խօսքդ, մէկ կոշտ արարքդ. այդ վայրկեաններուն կը զգատ ճակտիւ շառա. գունիլը ու սրտիդ փղծկիլը, եւ յանկարծ տարօրինակ ու ստիպող փափաք մը կը ախրանայ քեզի երթալ զանելու այդ առնելով խոցուած անձը, ու զինքը գրկելու, անոր ձեռքերը, շուրթները համբուրելու ու իրեն պոռալու «կը սիրեմ քեզի, կը սիրեմ քեզի», որպէս թէ սիրովդ ուզէիր ամօքել, անհետացնել անոր պատճառած ցաւը: Ինծի շատ սովորական է ասիկա. երբեմն զգջումներ կ'ունենամ, վայրագարչ լլկանքի ու բարոյական տագնապի վայրկեաններ, մանաւանդ երբ կը տեսնեմ անիկա ընկողմանած իմ առջեւ, իր խոկուն աչքերը պարապին մէջ սեւեռած. կը զգամ թէ յանցանքը իրը չէր զիս չհասկնալուն, թէ խաբէութիւնը իրմէ չէր, ու ներսս բան մը կը փլի, ու ծուռկերուս վրայ կը մօտենամ անոր, հաշտութեան ու սիրոյ բառեր միմիջեւով, անոր մօտները արցունքներով թրջելով, անոր հեշտութիւնը թուրող մազերուն մէջ երեսս թաղելով. բայց անիկա չհասկնար իմ զղջումս, ինչպէս չէր հասկցած զայրոյթս, ու ետ կը մղէ զիս անհամբերութեամբ, արհամարհանքով: Շուտով սկսաւ ան ալ չար բլլալ. հիմայ իմ օտարի

հանգամանքս իբր լուսանք մը կը թքնէ. երեսիս, իմ ամէնէն սիրած յիշատակներս, իմ կրօնքս, իմ լեզուս կը ծաղրէ, ու էր նախկին սէրերուն վրայ կը սկսի խօսիլ անամօթաբար, անպարկեշտօրէն. . . այդ վայրկեաններուն կը զգամ որ կոկորդոս կը սեղմուի խեղճութեամբ անսահման ու աչքերուս մէջէն մռայլ ամպեր կ'անցնին ու մօտներս կը կծկին, կը կծկին երեւակայական վիզի մը շուրջ կասեցնելու համար այդ լիբր ու մահարոյր յորդումը:»

Վահրամին գէմքի արտայայտութիւնը սոսկացուց զիս, եւ ուղեցի ընդմիջել, դադարեցնել այս խռովիչ մենտալստութիւնը:

«Զգէ՛, ձգէ՛, հրամայեց, ձգէ՛, որովհետեւ իննթիւնալու օտարձանին հասած եմ ալ. ձգէ՛, գոնէ իմ լեզուովս խօսելու վարժութիւնը ընեմ. անոր կարօտը կը քաշեմ. չես գիտեր ինչ անառնելի բան է օրերով, ամիսներով, տարիներով զրկուիլ իր պէտքերը, դադափարները, զգացումները յայտնելու քնդիւրին, էն ընտանի միջոցէն. չես գիտեր ինչ տանջանք է սրտազեղման, հեշտանքի բռնաներուդ մէջ կարող չըլլալ գործածելու ան պարզ, աղուոր ու շոյող ամականները որոնց զգուանքին վարժութեամբ է մեր ականջը, որոնց երաժշտութիւնը կ'օրօրէ մեր երեւակայութիւնը. երբեմն կը մտածեմ որ եթէ Սօֆի հասկցած ըլլար իմ լեզուս ինծի պէս, եթէ ատ եղած ըլլար իր մայրենի լեզուս, անիկա պիտի կռահէր նաեւ իմ յոյսերս, իմ տառապանքս ու վիհ մը չպիտի բացուէր մեր մէջը: Պահ մը ուղեցի մօտենալ իմ ցեղակիցներուս, որոնցմէ խոյս տուած էի: Կինս սակայն ընդզվեցաւ այդ գաղափարին դէմ, իր պժգանքը ու գամահրանքը դուրս տուաւ, ու ստիպուեցալ հետեւիլ անոր, կապուիլ անոր ընտանիքին, անոր բարեկամները ճանչնալ, նոյն ինչ անունս փոխել. . . ու ալ կը զգամ որ օրէ օր ստորնութեան եզախրի մէջ կը խրիմ, կը սուզիմ, կը կորսուիմ. իմ աչքիս առջեւ անգամ արժանիք մը չունիմ այլեւս, ու ժամերով կուլամ իմ ինկած եսիս վրայ:

\* \*

Արեւուն տապը կը սաստկանար, զրեթէ

անհանդուրժելի կը դառնար . լճափն ի վար  
զլիսահակ կանաչութեան շուքը հազիւ գոյու-  
թեան գազափար մը կը ներշնչէր . անոնց խո-  
րունկ ու անծիր ստուերները ջուրին մէջ  
հեռաւոր նոսրթալժիք եղեմներու խուսափեալ-  
ներ կը ներկայէին ուր գոռաւտենչ ու յայ-  
րատ ամուրներ թուփերու ետեւ պակշտտ պա-  
րերու մէջ կը թալկանային . հանդարտու-  
թիւնը ընկճող բան մը ունէր . թիւերուն ճաղ-  
փիւնը հեծկտուք մը կը քնէր բնութեան  
այս շքեղ մեղկութեան մէջ . պուրակին մէջ  
երբեմն սկիւռի մը՝ ճիւղերուն մէջէն մազ-  
ցելուն՝ հազիւ լսելի խշրտուքը կամ ճնճու-  
կի մը մացառներուն վրայ ոստոսալներ կհան-  
քի զարկը կը մատնէին :

Վահրամ թիւերը ձգեց լանկարծ , ու նայ-  
ուածքին մէջ տեսակ մը արհաւիրքով հեծեց .

«Ա՛ա , մե՛ղք ինծի , մե՛ղք կեանքիս . . .  
երբ պատանի մըն էի՝ կ'երազէի միշտ ծոյլ ,  
թափառակտն , անձանծիր կիանք մը , միակ  
ընկեր ունենալով պաշտելի , պարուրող ,  
մայրական երազը , որ մթնոլորտ մը պիտի  
կազմէր շուրջս , մեկուսացնող մթնոլորտ մը  
պատապարող ամէն ազդեութիւններէ , կոշ-  
տութիւններէ , ցաւերէ . . . ու սրտանց՝ կ'ա-  
ռէի ան առեւտրական աշխարհքը ուր հօրս  
կամքովը ոողալ կը ստիպուէի : Հիմայ  
հօրենական ժառանգութիւնը զիս անկախ կը  
ձգէ . չկան այլեւս ֆօրպէ՛ներ , անսխորժ աշ-  
խատութիւններ , քմացս համեմատութեան  
էն գեղահրապոյր խորշերը կրնամ այցելել ,  
վայելել . ամբողջ փափաքս կ'իրականանայ ,  
եւ իմ մէջս այլեւս եռանդ չեմ գտներ , հիա-  
ցում չեմ գտներ , աւացում չեմ գտներ .  
պարապ աւելը կ'ուզեմ աչքերս , միտքս ,  
հոգիս լեցնել աղուոր տեսարաններով ,  
աղուոր երաժշտութիւնով , աղուոր գիր-  
քերով՝ ախտաճէտ մարմնոյ մը անուղբ մե-  
ծածին պէս՝ չեմ կրնար ստանք իւրացնել ,  
անոնցմով ինքնամոռացում մը ստեղծել .  
ցուրտ , խոնաւ , քարայրային աղջամուղջ մը  
կը սփռի մէջս . . . մեռած ճահիճ մը , թանձ-  
րացած , կանանչցած , նեխած , ուր լոյս չթա-  
փանցէր , որուն միակ լոյսը իր փտած ան-  
ղընդային խորէն դուրս մաղուող նշոյլն է :  
Եւ սակայն հոն կին մը կը տիրէ , բանակա-

նօրէն , աններողորէն որ պիտի խեղդէ՝ զիս ,  
պիտի խեղդէ՝ զիս եթէ ես զայն չխեղդեմ .  
կ'ուզեմ հեռանալ անկէ , քալել , վաղել ,  
յոգնիլ , մոռնալ անիկա (տեսակ մը ռանտամով)  
մոռնալ , ու նոյն պահուն իսկ անոր մաղե-  
րուն յիմարացնող արդուութիւնը , մորթին  
բուրումը , մարմնին ջերմութիւնը կը պաշա-  
րեն , կը սարկացնեն զիս , մինչ ձայն մը ա-  
կաջս ի վար կը գահավիժէ . ասոնք քուկինդ  
չեն , երբեք քեզ չեն վերաբերած . ու ինձ  
անանկ կը թուի որ անոր մաղերուն ամէն մէկ  
թիւը մէկ մէկ իմի կը փոխուի , մորթին բուրու-  
մը թուաւոր կազի , մարմնայն ջերմութիւնը  
հեղձուցիչ կրակի որպէս զի այրեն , տոչորեն ,  
մեռցնեն զիս : Տկար ու ստորին արարածի մը  
պէս նախանձը կը զգամ իմ մէջս . անոր ալ-  
նարկներուն , անոր մտածումներուն , անոր  
զգացումներուն վրայ կը կանգածիմ . անոր  
երազներէն իսկ կը դողամ . ա՛լ քուն չունիմ .  
գիշերուան մէջտեղ կը կանգնիմ ու անոր  
վրայ կը հակիմ սարսափով , անոր փակ ար-  
տեւանունքներուն վրայէն կ'ուզեմ երազնե-  
րուն ընթացքը գուշակել . կը զգամ որ իր  
ննջած պահուն իսկ ատելի եմ ես իրեն . եւ  
սակայն այդ միակ վայրկեանն է ուր տեսակ  
մը հանդարտութիւն կ'ունենամ , տեսակ մը  
զինադադար , եւ փորձութիւնը կ'ունենամ  
յուրեթացնելու այդ զիրքը , այդ քունին  
անմեղութեանը մէջ անշարժեցնելու զայն :  
Կը զգամ որ պիտի խենթեմ . . . զեռ  
անցեալ օր անոր դատաւկները բռնեցի ու  
պրկեցի զանոնք հրամայելով որ իմ աչքե-  
րուս մէջ նայի , նայի , նայի հոգւոյն բոլոր  
ուժովը որպէս զի դուրս ժայթքէ թագուն  
գաղտնիքը որ երբեք չպիտի յայտնուի ինծի ,  
ու ցաւէն , քիչ մըն ալ վախէն — ինչո՞ւ անոր  
վախը ինծի այնչափ ուրախութիւն ամթեց —  
երեսս ի վեր «խենթ , խենթ» պտապ ու սե-  
նեակէն փախաւ . ա՛հ , կը զգամ որ կը խեն-  
թեմ կոր :

«Դադու՛մ մըն է ալ հիմայ , անոր հոգիին  
կ'ուզեմ տիրանալ , ան ի՞նչ անպարագելի  
սարսափ է իմ երբ կը զգամ թէ անիկա օր  
օրի կը խուսափի իմ հասողութենէս . Սօֆիի  
ամէնէն աննշան խօսքը , ամէնէն պզտիկ  
շարժումը կը մատնեն հեռաւորութիւնը անոր

հոգիին , ու խօլ հետապնդումներ կ'երազեմ  
այդ արագաթուփ , անպատկառ ու հեզնոց  
հոգիին ետեւէն , հեւ ի հեւ սուրացումներ ,  
հատաստող , սահող , չլմորեցնող սառերի  
մը ետեւէն որ երբեք չպիտի գերուի . եւ  
սակայն կ'ուզեմ անոր հոգիին տէրը ըլլալ ,  
եւ վստահ եմ թէ օր մը , չուրթներս անոր  
չուրթներուն վրայ , աչքերս աչքերուն , պի-  
տի սեղմեմ զանիկա գրկիս մէջ , սեղմեմ ,  
սեղմեմ մինչեւ որ անոր հոգին իմինիս միա-  
նայ , իմինիս հետ նոյնանայ , իմինիս մէջ  
անէանայ . . . »

Ձկրցայ այլեւս զիմանալ :

« Կեցի՛ր , վահրամ , հոս ելլենք , քաղենք ,  
չարժումի , օդի պէտք ունիմ » պոռացի , ու  
քաշեցի բարեկամս քարուտ ու խորաուրորտ  
եղերքն ի վեր , ծառերու կոճղերուն մէջտե-  
ղէն , լսեցնելու , իր մղձաւանջէն ազատելու  
համար անիկա :

Ե. ՇԱԽԱՐԵ

Մանչեսթր 12 Յունուար 1902

## ՅԵՇՈՂՈՒԹՅՈՒՆ

(ԲՕՆՏԷԼ)

Երգե՛րու պէս , որոնք կու լան  
Չուրակին ծոյլ հայտնի սակ ,  
Սիրոյ յուսեր հին , դժնդակ ,  
Կ'անցնին մեքս անկերպարան :

Յուսերն՝ յոյզեր շարան շարան  
— Յար փախչոյցող գետի՛ կոհակ . . . —  
Ձայներու պէս որոնք կու լան՝  
Ճպոսին նո՛ւրբ քելերուն սակ :

Աչե՛ր , ամբողջ սեր , սիրական ,  
Դեմքեր անուշ , քույս ու հերմակ ,  
Մեղմ երազներ միսքերու սակ  
Մտիս խորք կը քրքուան  
Երգերո՛ւ պէս՝ որոնք կու լան . . .

ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՅԱԿՈԲՅԱՆ

## ԱՇԽԱՐՀԻ ԾՐՋԱՆԸ

ՇՐՋԻԿԻ ՆՕԹԵՐ

(ԺԱ.)

29 Դեկտ. , Բէլին

Գանգէսի նուիրական ափունքներէն բաժ-  
նուելու օրերը կը մօտենային ա՛յ , չարթուան  
բալբուռելովը , եւ այդ արտուր բաժանումը ,  
անհուն թախիծով մը կը լեցնէր հոգիս , որ  
չէր կշտացած Կողմաներուն խորհրդաւոր  
երկրին բոլոր կոյս ազուրուրթիւններովը ու  
հրապոյր բոտ միաթիւրութիւններովը :

Հնդկաստանի չքնաղ մայրաքաղաքին՝  
Կալկաթայի բուսարանական պարտէզին ար-  
մաւենիներու հրաշալի ծառաստաններուն մէջ ,  
օրերով թափառած էինք Բաիպաի հետ , ու  
տակաւին բան մը կար , որ ետ ետ կը քա-  
շէր զիս , եւ քալերս չէին ուղեր բաժնուիլ  
այն նուիրական հողերէն , որոնց վրայ այդ  
հրաշալի երկրին հին իմաստունները կոխո-  
տած էին , երկիր մը , ուր ամէն բան զիւ-  
թական հմայք մը ունի :

Չեմ զիտեր թէ , մեզի անսովոր ըլլալուն  
համար էր որ , խենթ հնալու չափ կը հրա-  
պուրուէի բոլոր այն պղտիկ բաներէն , որոնց  
կը հանդիպէինք , թէ անոնք իրաւցնէ կա-  
խարդական հմայք մը ունէին , ուրկէ կը  
չլանար աչքս , եւ ուրկէ , ա՛հ , չէի ուղեր  
բաժնուիլ :

Բայց չէ՛ , բնութիւնը անանկ կոյս հրաշա-  
լիքներ պահած է հոն իր ծոցին մէջ , եւ  
ամէն բան այնչափ անեղծ մաքրութեան մը  
դրոշմ ունի որ , կարելի չէ չգրաւորիլ ա-  
նոնցմով , որչա՛փ ալ աննշան ու պարզունակ  
բաներ ըլլան անոնք :

Մաքուր ու անկոխ հողերուն վրայ աճող  
խնկաւետ ծառեր , իրենց լայն , փռուած տե-  
րեւներով , դրախտանման պարտէզի մը ման-  
րանկարը ձեւացուցած են հոն , ամէն ուր որ  
պչրասէր մարդուն աւրշակող ձեռքը չէ զօ-  
րած խառնակել զանոնք , խաթարելու համար  
բնութեան այդ զիւթական հրաշապորժու-  
թիւնները :

Լեզուն ու գրիչը , ո՛չ ալ վրձինը , կրնան

նկարել այն հիանալի, այն խենթեցնող գեղեցկութիւնը, զոր բնութեան քահանայքը եղած է չոպլորէն սարքել այդ երկրին մէջ, չեմ գիտեր ի՞նչ մասնաւոր գիտաւորութիւնով մը :

Սակայն, է՛հ, ի՞նչ ընեմ որ, մարդուն չէ տրուած երկար վայելել ի՞նչ որ հողը ու երկինք իրեն համար կը սարքեն :

Տակաւին կարօտ նայուածքով մը դէպ ի ետ, հոգիէս ու բոլոր բաղձանքներէս բան մը ձգելով հոն, կը բաժնուէինք վերջապէս մաքուր գեղեցկութիւններու այդ անմահ քաղաքէն, վերջին սրտազեղ հրաժեշտի մը մէջ մտնելով ամէն չափեցած կարօտ, ամէն նոր բաղձանք, ա՛լ չեմ գիտեր թէ ծովով թէ ցամաքով, ուղեւորելու համար Ծայրագոյն Արեւելքի չոր ու խոպան երկիրը, որ ոչ մէկ հրապոյր, ո՛չ մէկ բաղձալի բան ունէր մեզի համար, իր խորամանկ, սատանայամիտ մարդիկը տեսնելու հաճոյքէն դատ : Քաղաքական անջատումը անանկ խորունկ եղած է դեղին ու ճերմակ մարդոց մէջ, որ Չինացիներն են, հմտաւար անոր բարք ու վարքին, կենցաղին, մեծ հետաքրքրութիւն մը դարձած է Եւրոպացիին համար :

Գէթ ես, իմ մասիս, ասորոքինակ հետաքրքրութիւն մը ունիմ անոնց նկատմամբ : Պըզտիկուց սկսած էի երեւակայել զիրենք աշխարհի ամէնէն հին ժամանակներէն մնացած ճարտարամիտ, սատանորդի մարդոց միլիոնաւոր բազմութիւն մը, որոնք իրենց երկրին անսահման տարածութեանը մէջ, անհամար մըջիւններու պէս, կը վժան, կաշխատին, կը գործեն, բուրսովին անջատուած օտար երկիրներու յարաբերութենէն, իրենք իրենց, միմեկուկ, քաղաքակրթութիւն մը ծաղկեցնելով, իբր թէ, օտարներու քիթին խնդալով, ըսելու պէս. «Մենք ձեր խելքին պէտք չունինք» :

Ու միմիայն գեղին մարդոց վրայ ունեցած մեր այս հետաքրքրութեան համար էր որ, Հնդկաստանէն բաժնուելու դառն զոհողութիւնով, կ'ուղղուէինք Նրկնային Կայսրութեան անձանթ սահմանները :

Կալկաթայէն, ծովու քանի մը օրուան ճամբորդութենէ ետքը, հիւանալի ուղեւա-

րութիւն մը կ'ունենանք դէպի Կարաւ, Դէնս-սիբի մի կողմերը, հսկայ ուղտերու վրայ, բաւական բազմաթիւ կարաւան մը կազմած, ամէն լեզուէ ու ամէն կրօնքէ մարդոցմէ, որոնք ուխտի կերթան, ապրանք կը փոխադրեն, կամ կը ճամբորդեն մեծ քաղաքներէն դէպի գիւղի պղտիկ կայքերը :

Ուղտի այս ճամբորդութիւնը, ու չրջապատող տեսարաններուն զմայելի աղւորութիւնը չգտնուած բան է : Տախարակ ու անձայրածիր մարգագետիններ, անապատային կարծուած այս տեղերուն մէջ, որոնք ձայր ու սահման չունին : Ճամբուն եղբրքը կամ թղուկ բլրակներու կողերուն վրայ, պղտիկ, սիրուն հիւղակներ ցանցնուած են, մեզուի բեթակներ աւելի, որոնց ապակի կեանք մը կ'անցնի, ամէնէն երանաւէտ ու երջանիկ կեանքը թերեւս, նախնական պարզունակ ձեւերուն :

Բոպիկ, կիսամերկ տղոց անթիւ բազմութիւն մը կը վժայ այդ խղիկներուն շուրջը : Ժրաջան մեղուներու պէս, գլուխին ծռելով ցածուկ դանակէն ներս կը մտնեն, կելնեն, կը խաղան, կը կոնչվառն, մանչ աղջիկ իրար պլլուած, կայտռուն պարեր կը դառնան, կը վազեն մեր ետեւէն, ուղտերէն բուրդ քաշելու համար, անգիտակ բուրսովին կըրթուած մարդու կեանքի պայմաններուն :

Տեղ տեղ, ովասիսի նմանող սիրուն կոյքեր կան, ուր անապատային այս անմահ գեղեցկութիւնները հրապոյրքի աւելի աղւոր քօղ մը կը հագնին, Քարոտ ու անջրդի կայքերուն մէջ, տեղ տեղ հօրեր կան, ուրկէ սեւուրիկ աղջիկներ եւ հուժկո՜ւ մայրեր, կերթան ջուր կրել : Կուժը իրենց գլխուն վրայ, բազուկին մանեակ մը ձեւացուցած, ի՞նչ սիրուն է անոնց տեսքը, երբ, խմբովին, երգի խօլ եղանակ մը իրենց չրթուքին ծայրը, «Ջրբերք»ի կերթան : Պապուները, անդին, կարմիր քարերուն վրայ ծաղկապտիկ նստած, անհոգ, իրենց երկայն ծխաւորձը կը քաշեն կուշա փութակով մը : մարտնչին ամառաբելով, եւ խոհական շարժու ձեւերով բաներ մը փոփսալով իրարու, — հարկաւ պատմելով այն զիւլմական պատմութիւնները, զորս իրենց երկրին առասպելաբանութիւնը

ախնքան գեղեցկօրէն դիտէ հիւսել :

— Ու կը զարմանամ թէ, իրենց այս խախաղ կեանքով, ինչպէս կապուին այս մարդիկը, որոնք ո՛չ մէկ հոգ, ո՛չ մէկ գործ ունին ընելու :

Այդ դիւթական ու ամբողջ խորհրդաւոր միութիւնութիւններով լեցուն հոգերուն վրայ, ճամբան, կը պատահինք թափառական օձա-հմաներու, որոնք անթիւ օձեր պլլած իրենց վիզին, թիւին, սրունքներուն չուրջը, կը թափառկոտին տեղէ տեղ, իրենց մոգական զօրութիւնով կախարդելու համար դիւրախաբ աչքերը : Բանի մը կտոր պղինձ դրամ զնելով անոնցմէ մէկուն ափը, Բախալ ինծի համար խաղցնել կուտայ օձերը : Սարսափի ու պակուցման վայրագ տեսարան մըն է այդ թունաւոր հրէշային կենդանիներուն խաղը : Թափառիկ անապատականը, թոթուելով վրայէն բոլոր սեւ ու կանանչ օձերը, կը նստի պամպուկի մը տակ, ու ծոցէն եղեգէ սրինգ մը հանելով, կը սկսի մոգական սուր եղանակներու : Օձերը կը ցցուին, կը ծառանան, կը գայարուին, իրար պլլուած հրէշային խաղեր կընեն, լեզու կը հանեն, աղաչական նայուածքներ կուղղեն մեզի, իրենց կրած բոլոր չարչարանքներուն համար :

— Ճինհուաղա, ճինհուաղա, — կը պոռայ Բախալ օձահմային, վախս նշմարելով :

— Բիքահէ, — կը հարցնէ ան, չարածձի խնդուքով մը, — ու սրինգին եղանակը կը փոխէ : Օձերը կը խլօքնան, ցատուծնին կիջնէ, կը գատուին իրարմէ, ու, թուլցած, սողալով, կուգան իւրաքանչիւրը իրենց տեղը փաթթուիլ, անլեզու, գառնուկներու պէս :

\* \* \*

Բէքին երթալ չէր նպատակնիս, այլ Երկնային Կայսրութեան ներքին անձանօթ քաղաքները, հոն գտնելու համար ժողովուրդին բոլորովին ընտանոթի կեանքը, իր անկեղծ ձեւերուն մէջ : Բայց երկաթուղիներու չգոյութիւնը, եւ կտաղաշտ գեղիններուն ձեւքը համով զո՛հ մը չիյնալու վտիւր, պարտաւորեցին մեզ՝ մեր չրջիկի քայլերը ուղղել դէպի Չինու մայրաքաղաքը, մանաւանդ որ այդ միւս տեղուանքը մունչ անասուններ պիտի

դառնայինք : Ո՞վ պիտի հասկնար մեր լեզուն հոն, կամ մե՛նք ինչպէս՞ պիտի կրնայինք հասկնալ այդ դեղին սատանաներուն հազարաւոր գիրերով կապուած լարիւրինթոսային լայրբաւոր :

Բէքինի տեսարանը, հեռուն, ամէնէն տարօրինակն է, զոր ու եւ է քաղաք մը կրնայ ունենալ : Անդրաշխարհի մարդոց բոյն մըն է կարծես այդ քաղաքը, մէջէ մէջ հսկայ պարիսպներով, միջնաբերդերով, աշտարակներով, որոնց վրայ կը տատանին գոյնզգոյն ամենի գրողներ, առեղծուածային թռչուններու երամ մը ձեւացնելով, օդին մէջ :

Կոկորդիլոսի թափօր մը կը պատցնէին «չինուամաչիները», երբ քաղաքէն ներս կը մտնէինք, կառքով մը, որ ոչ մէկ տեսակ կառքի կը նմանի մեր գիտցածներէն : Բոլորովին չինական խելքով սիրուն բան մըն է այդ կառքը, որ փոռուրի չափ թեթեւ, կը սլանայ խորտ ու բորտ ճամբաներուն մէջէն, թէպէտ երեք մասնաւոր կրօնքներ ճանչցուած են հոս, սակա՞ն, ասոնցմէ դուրս, կրօնքի անթիւ ձեւեր կան, եւ ամէն Չինացի՝ պաշտամունքի մասնաւոր կերպ մը գտած է իրեն, իր խելքով, որուն կոյր հաւատքով մը փարած է : Կոկորդիլոսի թափօրը չափազանց հետաքրքրաշարժ ու զուարճալի բան մըն էր : Մարդ կը զարմանայ թէ, սոսոնց պէս հնարամիտ, ուշիմ, խելացի մարդիկ, ինչպէ՞ս կրնան կոկորդիլոսին աստուածութիւնը փառաւորելու միամտութիւնը ունենալ : Ի՞նչ որ ալ ըլլայ սակայն, հրաշալի բան մըն է այդ տեսարանը : Պղինձէ ամենի կոկորդիլոս մըն է չաստուածը, կանանչ, կարմիր եւ դեղին գոյներով ներկուած, որուն չուրջը հաւատացեալներու խուռներամ ամբոխ մը, ո՛րը անոր հսկայ թաթերուն տակ անիւ եղած, ո՛րը ցնծալից խնդուքներով ցատկաւելով, կը չրջադայեցնեն զայն կտատունէ կռատուն, հանդիսաւոր երգեցողութիւններով :

Առիթը չի փախցնելու փափաքով, միսիօնար առաջնօրդի մը հետ կը հետեւինք այդ թափօրին : Կրօնի թէ՛ Ճաբոնէն ներմուծուած է Չին, այդ հաւատքը, որ հետզհետէ

ընդարձակ տարածում դանելու վրայ է, մինչեւ երկրին ներսերը, Թափօրին կռատուն մանկէն ետքը, արարողութիւններուն հանդիսաւորութիւնը ա'լ աւելի մեծափառ երեւոյթ մը կը ստանայ, Հաւատացեալները, այդ հսկայական թերափին տոջեւ, կը խոնարհին, կը խնկարկեն զայն, մեզի անծանօթ հաղար ու մէկ սլաշտամունքներ կընեն, կը պոռան, կը կանչեն, տղաքներու պէս կը ցատկըտեն, — անհուն խրախճանութիւն մը վերջապէս, շնթալից խնծիկ մը մը, պանծացնելու համար կոկորդիլոս-չաստուածին ամենազօր կարողութիւնը:

Չինացին եւ Չինաստանը այնչափ բան ունին իրենց վրայ ընեցնելիք, որ հոս մինչեւ անգամ փափաքը ունեցայ զիրք մը գրելու, եթէ չուտով մեկնելու պարտաւորութիւն մը չստիպէր ետ կեցնել զիս այդ փափաքէն:

Չինական յախճապակիով եւ չինական գեղակերտ նկարներով զարդարուած սենեակի մը մէջ, չինական գրասեղանի մը եւ չինական թուղթի վրայ, չինական չամբարի մը առջեւ, չինական մեղանով, եւ չինական զրրիչով մը, — ամէն բան չինական, սա ի՞նչ աղւոր բան, — թուցիկ սողնոր կը խազիւղեմ, մետաքսէ չինական թուղթին վրայ, մեղանի խոշոր պողոնքներ ակօսելով որուն մէջէն չեմ գիտեր թէ պիտի կրնամ ելլել Մասիաի գրաշարները, որոնց նախորդ շարթու խնայեցի անտղամար մէջ դանուած անձոռնի թուղթի մը վրայ ձեռագիր գրկելու:

Թուղթն հատաւ արդէն ու աչքերս կը ծանրանան:

«Անդր՝ ննջել երթիցոյ, զի ֆաղցրացան մեզ անկողինք»:

Յետաւթիւն ուրեմն:

ՍԻԷԼԼՍ.

ՄԱՆՁԱՐԱՅԻ ԽԷԼԻՍԹԸ ԶԻՆՍԵ: —

Բ. Դրան իրաւագէտ խորհրդականաց օգնական եւ զինուորական բժշկական փարժարանի ֆրանսերէնի ուսուցիչ Պօլոս Է. Բէրէտէնեանի սոյն երկասիրութիւնը Թուրք մամլոյն զնախառման արժանացած է: Մանաւորապէս իջեալ եւ Սապան լրագիրները մեծ գովեստով խօսած են սոյն երկասիրութեան վրայ, նկատելով զայն իբր ընտիր գործ մը օսմանքէն զրականութեան:

Յ Ե Ղ Ե Ղ Ե Ղ

Դեղգեղն աղու սոխակին, —  
Երբ ան՝ արբօռ հուր սիրով,  
Դարնան այգուն ցօղագին  
Կ'երգէր խանդոս յոյգերով . . .

Կարկազն անուշ վսակին, —  
Երբ պսաղղուն կը սահէր  
Անտառին մէջ մրագին՝  
Իբրեւ հուրի լուսանէր . . .

Մամուկն հեգիկ ծովակին, —  
Երբ՝ համբուրէր իր ափեր  
Ամեն առտու զովագին,  
Ու կէս օրին մըրափէր . . .

Շունչը բուրեղ զեփիւռին, —  
Երբո՛ւ փաւած վարդերուն՝  
Կը փայփայէր մուկն, լռին,  
Անոնց բերքերը քրքուն . . .

Այս մըմուկներըն ամեն, —  
Ջրւարք, անմեղ, հոգեգրաւ,  
Քաղցրանուա՛գ, կը կազմեն  
Դիւրիչ խըմբերդ մը, իրա՛ւ,

Վսե՛մ խըմբերդ, բայց աւա՛ղ,  
Չի՛ լսուիր ան շարունակ,  
Եւ ան՝ ո՛րքան է նըւաղ  
Ձայնիդ փոլ ջի՛նջ, ներդաւնա՛կ . . .

Տրկար գանգի՛ւնք միայն  
Քու սիրեցիդ հոգեյոյզ՝  
Որ ամփոփումն է համայն  
Դաւնակութեանց, չբնա՛ղ կոյս . . .

Ձայնդ, անփոփումն է, հոգեա՛կ,  
Դաւնակութեանց անըման,  
Ձայնդ, մեղեդի՛ն է միա՛կ  
Մըմուկներու միացման . . .

Թո՛ղ, շեշտերն այդ անուշիկ  
Մեղեդիին, մեղմօրէն,  
Դառն պատրանքի մէջ՝ յուշի՛կ  
Սիրով հոգիս օրօրէն . . .

Ա. Կ. ԿԻԼՊԷՆԿԵԱՆ

Մարգուան

## ՏԻՐԱՄԱՅՐ ԵՂԻՍԱԲԵԹ ՕՐՄԱՆԵԱՆ

Խորին ցաւով կ'արձանագրենք, մեր կարգին, Ամեն. Ս. Պատրիարք Հօր ծեւրունագարդ մօրը՝ Տիկին Եղիսաբեթ Օրմանեանի մօհը՝ կարճատեւ հիւանդութենէ մը ետքը, որու միջոցին բժշկական դարմաններ ու ընտանեկան խնամքներ անպակաս եղան։ Տիկին Եղիսաբեթ իր հոգին աւանդեց կիրակիէն երկուշաբթի լուսնալու գիշերը, առանց ցաւի ու տառապանքի, խաղաղիկ կերպով։ Ամէն անոնք որոնք մօտէն ճանչցած էին հանգուցեալ Տիկինը, կը համակրէին իրեն՝ նկատելով զինքը տիպար մը խաթունիկ հայ կնոջ, բարի, առաքինի ու բարեպաշտ, հոգածու իր զաւկըներուն ու թոռներուն, զորս կը չըջապատէր գուրգուրանքով։ Այդ եօթնասուներկինը տարեկան կնոջ ներկայութիւնը, — պահելով իր մատաւրական ու ֆիզիքական կարողութիւնները, — իր տանը անկիւնը, ուր միշտ ձեռագործ մը ունէր ձեռքը եւ անախտա մնալ չէր դիտեր, աւելի եւս կը շեշտէր նահապետական հանգամանքը Օրմանեան ընտանիքին, աւանդապահ, պարզասէր, հիւրընկալ ու աշխատասէր ընտանիք մը «ուր, ինչպէս ճշգրիտ կերպով կը յատկանիչէ պաշտօնակից մը, ամէն բան իր կարգին է միշտ, ուր բան մը չի պակսիր, եւ ուր բան մը չի կորսուիր, ուր զաւակները եւ զաւակներէն ետքն ալ թոռները, յաջորդաբար կը մեծնան, պարկեշտ, բարեկիրթ, աշխատասէր եւ գործունեայ, ամէնքն ալ»։

Հանգուցեալ Տիկինը սպաւօր կը թողու իր հինգ զաւակները, — Ամեն. Տ. Մաղաքիա Ս. Պատրիարքը, Տօքթ. Կոմիտաս Էֆ. Օրմանեան, Տիկին Գարրիէլ Լէքէճեան, (ի Գահիրէ), Տիկին Միհրան Տէր Ներսէսեան եւ Օր. Ագապի Օրմանեան, իրենց պարագաներով։

Երկուշաբթի առաւօտ կանուխ Բերայի մէջ, եւ յետոյ մայրաքաղաքիս զանազան թաղերը տարածուելով Տիրամայր Եղիսաբեթի մահուան գոյժը, եկեղեցական եւ աշխարհական ազգայիններ, եպիսկոպոսական դասէն ու ծանօթ անձնաւորութիւններէ սկսելով, վաւթացին Ս. Պատրիարք Հօր բնակարանը՝ իրենց ցաւակցութիւնները յայտնելու։ Նոյն օրը, իրիկուան գէմ, հանգուցեալ Տիկինը մարմինը փոխադրուեցաւ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցին, առաջնորդութեամբ տաներէց Տ. Մկրեան Հօր։ Երեքշաբթի օրն ալ շարունակուեցան ցաւակցական այցելութիւնները, եւ չորեքշաբթի կատարուեցաւ յուղարկաւորութիւնը՝ նախադահութեամբ Տ. Մկրտաչ արքեպիսկոպոսի, չըջապատուած՝ մայրաքաղաքս գտնուող բոլոր եպիսկոպոսներէն, եւ բազմաթիւ վարդապետներէ ու քահանաներէ։ Առաւօտուն, հոգեհանգստեան պատարադ մատոյց Տ. Բաբգէն Ծ. վարդապետ, եւ Ժամ 4½ին սկսաւ մեռելական կարգը։ Ս. Երրորդութիւն եկեղեցին լեցուած էր նմանը քիչ անգամ տեսնուած յուղարկաւորներու բազմութեամբ մը, որոնց մէջ կը նշմարուէին Ազգին ամէն դասակարգերը, Վարչական Ժողովներու եւ Տեսուչ Խորհուրդներու անդամներէն ու Պատրիարքարանի պաշտօնէութենէն զատ, պետական հոյ պաշտօնատարներ, առեւտրական ու սեղանաւորական դասը, բժիշկներ, փաստաբաններ, լրագրապետներ, ուսուցիչներ, եւայլն։ Ներկայ էին նաեւ ականաւոր օտարազգիներ, գեսպանատանց թարգմանները, պատգամաւորութիւններ Յունաց Պատրիարքարանին եւ Պուլկարաց Էկզարքարանին կողմէ, Հոյ Հռոմէկան վարդապետներ՝ Պատրիարքարանի գործակատարին հետ մէկտեղ (Պատր. Փոխանորդ Արքիտրեան Տ. Աւետիս

արքեպիսկոպոսի, անձամբ ցաւակցական այցելութեան գացած էր արդէն Ս. Պատրիարք Հօր (նաեւ արարող), Հայ Հռոմէական երեւելիներ, Ազգապետ Յակոբ էֆ. Պօյաճեան, եւ Բողոքական ծանօթ ազգայիններէն Յակոբ էֆ. Մատթէոսեան, Բրոֆ. Յակոբոս էֆ. Ճէճիղեան, Արշակ էֆ. Շմաւոնեան, եւն. :

Ս. Պատրիարք Հայրը, որ սգակիր կեցած էր զասին մէջ, պատրիարքական աթոռին առջեւ, արարողութեանց աւարտումէն ետքը ընդունեց ցաւակցութիւնները բոլոր ներկաներուն, — հայ եւ օտարազգի, — որոնք կարգաւ մօտեցան Ն. Սրբազնութեան, աշխարհականները՝ աջը հափուրելով եւ եկեղեցականները ողջագութեամբ : Սգակիր էին նաեւ Տօքթ. Կ. Օրմանեան էֆ. եւ Միհրան էֆ. Տէր Ներսէսեան որոնք հոյնպէս ընդունեցին ներկաներուն ցաւակցութիւնները :

Յաւի ու յարգանքի այս արտայայտումէն ետքը, որ կէս ժամէ աւելի տեւեց, զազաղը հանդիսաւոր թափօրով դուրս հանուեցաւ տաճարէն եւ առաջնորդուեցաւ եկեղեցիին դուռը՝ ուր կը սպասէր մեռելակառքը : Դազաղին ծոպերը բռնած էին Պատական Խորհուրդի անդամ Քորտսի էֆ., Քոնսթանթին էֆ. Քարաթէոտորի, Բ. Դրան Ա. Թարգմանիչ Տաւադէ էֆ., Դրիգոր էֆ. Խորեան, Դրիգոր էֆ. Կիւմրէշկէրտան եւ Յակոբ էֆ. Պօյաճեան : Իսկ կերոնները կը կրէին՝ Գէորգ էֆ. Ասլանեան, Գարրիէլ էֆ. Սէրվիլէն, Սիմոն էֆ. Գոյսէրլեան, Արամ էֆ. Մարկոսեան, Պետրոս էֆ. Կարապետեան եւ Կարապետ էֆ. Խորասանեան :

Ս. Պատրիարք Հայրը, ինչպէս նաեւ Տօքթ. Օրմանեան էֆ. ու քեռայրը Մ. Տէր-Ներսէսեան էֆ., չըմպատուած՝ հանգուցեալ Տիկնոջ ազգականներէն եւ յուզարկաւորներու մէկ մասէն՝ կառքերով հետեւեցան դազաղակիր կառքին որ Ս. Յովնան Ոսկերեան եւ Այ-Թրիատա եկեղեցիներուն առջեւէն անցած պահուն, այդ եկեղեցիներուն զանգակները կը հնչէին :

Մարմինը ամփոփուեցաւ Շիշլիի ազգ. գերեզմանատունը, Օրմանեանց դամբարանին մէջ :

Մեծ-Եպարքոս Բարձր. Սայիտ փաշա եւ անգլիական դեսպան Սրբ Նիքօլաս Օ' Քօնօր իրենց այցեատմանը զրկած են Ս. Պատրիարքին, ի նշան ցաւակցութեան : Դատական նախարարութեան կողմէ, յուզարկաւորութեան ներկայ գտնուած էին Կրօնական գործոց տեսուչի օգնական Սէրվիլէմ պէյ եւ ուրիշ պաշտօնական անձեր : Ներկայ էր նաեւ սերպիական դեսպան Պ. Սաւա Կրուիչ : Ռուսիոյ դեսպանատան կողմէ եկած էր Ա. Թարգման Պ. Մաքսիմօֆ եւ պարսկական դեսպանատան կողմէ՝ պատուակալ թարգման Դրիգոր Խան Շամտանեան :

Հանգուցեալ Տիրամայր Եղիսաբեթ Օրմանեանի յուզարկաւորութեան առթիւ՝ փոխան ծաղկեպսակի զրամական նուիրատուութիւններ եղան Ազգ. Հիւանդանոցին : Ա. ցանկին, — սրուն զլուխը կը գտնուի Ս. Պատրիարք Հօր անունը, — գումարը կը հասնի 30 ոսկիի :

Մօտակայ գաւառներէն, ուր օրաթերթերու միջոցաւ հասած է Տիրամայր Եղիսաբեթի մահադոյժը, ցաւակցական հեռագիրներ ու նամակներ կը սկսին հասնիլ Ս. Պատրիարք Հօր : Ն. Ամենապատուութիւնը խանդակաթ սիրով կը գուրգուրար իր ծերունի մօրը վրայ եւ խորապէս զգածուած է անոր մահաւամբը որ վշտակցութեան ընդհանուր արտայայտութիւններ առաջ բերաւ :

Մասիսի Խմբագրութիւնը կը փութայ իր խորին ու անկեղծ ցաւակցութիւնները յայտնել Ն. Ամենապատուութեան, ինչպէս նաեւ Օրմանեան, Լէքէճեան եւ Տէր-Ներսէսեան ընտանիքներուն :

## ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐՍ

ՄԱՆԿԱԲԱՆ, 13 Յունուար 1902

Շաբաթէ մը ի վեր անձկութեամբ կը սպասէի մրցումի ելքին :

Ծնունդի առաջին օրն է : Գիշերային արարողութեան խորհրդաւորութեամբը համակուած ենք զեռ :

Ամբողջ ընտանիքով հաւաքուած ենք մեր ընդունելութեան սենեակին մէջ ու Ծնունդը շնորհաւորողներ հիւրընկալելու պատրաստ՝ արեւին պարգեւած ուրախութեան ազդեցութեան տակ ու օրուան տօնական հանգամանքին առիթով մանկական զուարթութիւն մը տիրած է մեր սիրտերուն :

Դուռը կը զարնեն յանկարծ . ես կերթամ բանալու : Հեռագրատան ցրուիչն է՝ որ ինծի կերկարէ կարմիր թուղթ մը ու կը մեկնի : Առաջին արագ ու անփոթ նաչուածքով իմ ու եղբօս հասցէն կը կարդամ վրան , ենթադրելով բարեկամի մը կողմէ շնորհաւորական մը . բայց դիտել կուտան ինծի թէ մինակ ինծի ուղղուած է ան : Բանալէ յետոյ , տակը կը կարգամ՝ ուսուցիչիս , Նշան Էֆ. Թորոսեանի ստորագրութիւնը : Այդ հետագիւրը՝ Գառն-գիւղէն՝ չափազանց անակնկալ ինքնին , կը պարունակէր ինծի համար՝ մըրցանակը շահած ըլլալուս աւելի անակնկալ լուրը :

Ամառուան ազուոր իրիկուն մը՝ երբ աւարտեր էի «Ծնունդին խղճահարութիւնը» ին վերջին մասը , միաքէս չէր անցած բնաւ զայն հրատարակելու համար գրկել ու եւ է թերթի : Մասին մրցումի հրաւերին ընթերցումէն անմիջապէս յետոյ միայն մտադրեր էի զրկել զայն մրցումի մասնակցութեան՝ ու նենալով յաջողութեան չափազանց տարտամ յոյս մը միայն՝ որ անշուշտ միակ գրգիւն մը կրնար ըլլալ ինծի :

Հետագրի հասնելէն քանի մը օր յետոյ՝ թիւ 1 Մասինը՝ Խմբագրութեան մէկ նամակովը , կուգար ինծի իմացնել ամէն մանրամասնութիւն :

Յաջողութիւնը՝ զոր ունեցայ այս գրա-

կան մրցումին մէջ , կը պարտիմ ապահովաբար յարգելի քննիչներուն ներողամիտ ոգիին՝ որով ուղեցին քաջաբերութիւն մը ընել գաւառացի շատ անշան պրօզի մը : Ուրեմն շնորհակալութիւններս իրենց եւ Մասինի Խմբագրութեան՝ որ իմ այս չնչին յաջողութեանս առիթով՝ այնքան համակիր տողերու մէջ կ'ուղէր ինծի շնորհաւորութիւններ՝ որոնց վրեւմ թէ այնքան արժանի չեմ : Ասոնք բոլորը ինծի կուտան անշուշտ գրգիւն մը յարատեւող ըլլալու համար ինքզինքս կատարելագործելու ջանքերուս մէջ :

Ինչ որ սակայն մեծ ուրախութիւն պատճառեց մանաւանդ ինծի , սա է որ անդիտակցօրէն ու անուղղակի կերպով առիթն ալ տուած եղայ մեր նորավէպի անստգիւտ վարպետին եւս համակրանքը հրապարակելու գաւառական գրականութեան մասին , որու օրընտօրէական ծաղմումի անկեղծ բաղձանքով համակուած ենք նաեւ ես ու իմ գաւառացի բոլոր եղբայրակիցներս :

Հերուան գրական վէճերէն յետոյ , թերեւս շատեր սո համոզումը գոյացուցին թէ վաղուան գրականութեան — ըլլայ ան գաւառի մեծ աւարդէն կամ կեդրոնէն բխած — գաղափարին ջատագովութիւնը , քանի մը գաւառացի գրողներու համար réclameի հընարամիտ միջոց մըն էր միայն :

Գաւառական , այդ ջատագովուած գրականութեան նկատմամբ հեղինակաւոր համակրութեան մը եւս հրապարակումն՝ որ ինքնին մեծ հերքում մըն է յամառ անհասկացողութեան մէջ ինկողներուն դէմ , կը խանդավառէ ու կ'ամրապնդէ զմեզ մեր կարծիքներուն մէջ :

ՎԱՀԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Յ. Գ. — Ոսկի ժամացոյցը՝ որ այս առիթով կը նուիրուի ինծի , Մասինի Խմբագրութեան կողմէ , շնորհակալութեամբ կ'ընդունիմ , անշուշտ ո'չ իբր գրական յաջմանակի մը պատուին , այլ քաջաբերութեան մը նիւթակտն ապացոյցն ու տեւական յիշատակն՝ որ ինքնագարգացումի պարտաւորութեանս յուշարարը պիտի ըլլայ :

Կը խնդրեմ Մասինի Խմբագրատպիւնն որ հաճի զայն յանձնել ուսուցչիս , Նշան Էֆ. Թորոսեանի — հիմայ Տնօրէն Գառն-գիւղի Արամեան վարժարանին , — որմէ կը ստանամ զայն :

Վ. Յ.

Արժանատի Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Տպագրութիւն Ե. ՄԱՏՈՒԷՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Ժինճանճըրար եօգուշու, Թիւ 27




# ՌՕՍՒԱ — ROSSIA

ԱՊՍ. ՀՈՎ. Ա. ԳՐԱ. ԿԱՆ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԷԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

|                                          |                  |
|------------------------------------------|------------------|
| 1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրիներ   | 34,775,642 ֆրանք |
| Երաշխաւորութեան գումար                   | 121,765,333      |
| 1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած | 164,172,000      |

Կեդրոնացեալի, Ղալաթիոյ ֆառափին վրայ, Մաքսան հին տեղը  
 Ընդհ. Քենի  
 Ա. ՀԻԻՐՈՒԻՉ  
 Ընդհ. Գործակալ  
 ՔԷՆՏՈՐ ՌԷԲԲԷՆ



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, լայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի ազդիւր մըն է:

## ՍԻՆԿԷՐ

մեքենան լաւագոյնն է, սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հարստաւունք եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակէ աշխարհի մէջ ամէն ոք Սինկէրի մեքենաները կը գնէ:

Սինկէրի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկէր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ԲԵՐԱ, ՄԵՃ ԴԹՈՂԱՅ, Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց:

ԿԱԼԱԹԱ } 1. Սինկէր խան, Թիւնէլին ետեւը.  
 } 2. Գարաքէօյ, Թրամփէյին կայարանին Դիմաց:

ՊՈԼԻՍ } 1. Սուլթան Համալ.  
 } 2. Սուլթան Պէյազլա:

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնագիւղեր գաւառաց բոլոր ֆաղափներուն մէջ

ՍԻՆԿԷՐ  
 ԱՊՍ. ՀՈՎ. Ա. ԳՐԱ. ԿԱՆ.

Կ. Ա. ՈՍԿԵԱՆ

# ԱՌՁԵՌՆ ԲԱՌԱԳԻՐՔ

## ՀԱՅԵՐԵՆԷ ՖՐԱՆՍԵՐԷՆ

Այս Բառարանին երկրորդ տպագրութենէն հաջորաւոր օրինակներու կարճ միջոցի մը մէջ վաճառուիլ ամենէն քորաւոր ապացոյցն է գործին արժանեաց :

Մասնաւորապէս ֆրանսերէն լեզուն յետադիմներուն համար պատրաստուած ըլլալով հանդերձ պիտանի եւ օգտակար է առհասարակ ամէն կարգի անձանց :

Իր պարունակութեան ճոխութեամբ , թուղթի եւ տպագրութեան մաքրութեամբ ու կազմի գեղեցկութեամբ հայերէն հրատարակութեանց ամենէն աժանը կրնայ կոչուիլ :

Գին զօրաւոր փառքօնէ կազմի 25 դր.

Գին ընտիր լաթակազմի 27 դր.

Կեդրոնատեղին է

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ վաճառատունը , Ֆիննանքլար եօգուու , Կ. Պոլիս

## ԻՒՆԻՕՆ

ՀՐԳԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

### ՀՐԳԵՀԻ ՃԻՒՂ

|                                    |                  |
|------------------------------------|------------------|
| Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վնասք | 240,000,000 ֆր.  |
| 1899ին գանձուած ապահովագին         | 19,500,000 »     |
| Գրամագլուխ եւ պահեստ               | 105,000,000 »    |
| Ապահովագրեալ դրամագլուխ            | 18,000,000,000 » |

### ԿԵՆԱՅ ՃԻՒՂ

|                                    |                |
|------------------------------------|----------------|
| Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վնասք | 99,000,000 ֆր. |
| Ընթացիկ ապահովագրութիւնք           | 253,000,000 »  |
| Գրամագլուխ եւ պահեստք              | 150,000,000 »  |

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ Ք Վ

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց գեղչեալ գիներով : Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները : Շահարաժիններու տարուէ տարի անմիջակա՞ վճարում , որով Իւնիօնի ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբուքիւններէն , որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք , որ շահաբաժիններու բաղման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին :

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆԺԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս , Կալաթա , Թահսապուրուն խան , Թում. Պանֆային դիմացը

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ